«Հաստատում եմ»
Հայաստանի բանկերի միության
Նախագահ՝
Հ. Անդրեասյան

21-ը փետրվարի, 2018 թ.

Որակավորման քննությունների անցկացման ընթացակարգ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն ընթացակարգով սահմանվում է որակավորման քննությունների (այսուհետ՝ քննություններ) կազմակերպման և անցկացման ամբողջ գործընթացը, նաև քննությունների արդյունքների բողոքարկման գործընթացը:

1.2 Սույն ընթացակարգի կիրառումը ապահովվում է՝ «Հայաստանի Հանրապետության Ֆինանսական կազմակերպությունների ղեկավար պաշտոնների որակավորման կանոնակարգով», «Քննական հանձնաժողովի կանոնակարգով» և Միության ներքին այլ նորմատիվ իրավական ակտերով:

1.3 Սույն ընթացակարգի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Միության գործադիր մարմինը և քննական հանձնաժողովի նախագահը, ինչպես նաև ՀՀ Կենտրոնական բանկը:

1.4 Սույն ընթացակարգը և դրանում կատարված փոփոխությունները հաստատվում են Միության գործադիր մարմնի կողմից և ուժի մեջ են մտնում հաստատման պահից

2. Քննությունների կազմակերպումը և անցկացումը

2.1 Քննությունների կազմակերպումը և անցկացումը (այսուհետ՝ նաև թեստավորում) իրականացվում է «Հայաստանի Հանրապետության Ֆինանսական կազմակերպությունների ղեկավար պաշտոնների որակավորման կանոնակարգով» (այսուհետ՝ Կանոնակարգ) սահմանված կարգով:

2.2 Սահմանված կարգով քննությունների մասնակիցների (այսուհետ՝ թեկնածուներ) հերթագրումը, փաստաթղթերի ընդունումը, գրանցամատյանում (թղթային կամ էլեկտրոնային) թեկնածուների գրանցումը, հաշվետվությունների կազմումը, համակարգիչների աշխատանքային վիճակի ապահովումը, տեսաձայնագրման սերվերի գործարկումը, քննության ընթացքի հսկողությունը և թեստավորման համակարգի

(ծրագրերի) (այսուհետ՝ Համակարգ) գործարկումը կատարվում է քննության պատասխանատուի (թեստ վարողի) կողմից:
Գրանցամատյանի ձևը սահմանում է քննական հանձնաժողովը:

2.3 Թեկնածուների նույնականացման տվյալների մուտքագրումը Համակարգ (անուն, ազգանուն, անձնագրի (նույնականացման քարտի) սերիան, անձի սեռը և որակավորման տեսակը), սահմանված կարգով քննասենյակ մուտքի ապահովումը, տեխնիկական պայմանների վերաբերյալ բացատրությունների տրամադրումը, թեկնածուների կցումը ներքին ցանցի համակարգիչներին և ըստ թեկնածուների՝ թեստերի էկրան բերումը կատարվում է քննության պատասխանատուի (թեստ վարողի) կողմից:

2.4 Քննությունների անցկացման համար Համակարգի գործարկումը իրականացվում է երկու գաղտնաբառերի և օգտանունների միջոցով: Առաջին գաղտնաբառի միջոցով թեստ վարողը մուտք է գործում Համակարգ, իսկ երկրորդ գաղտնաբառի միջոցով գործարկվում է ծրագիրը:

2.5 Համակարգի գործարկման գաղտնաբառերը փակ ծրարներով պահվում է Միության չհրկիզվող պահարանում: Անհրաժեշտության դեպքում ծրարները կարող են բացվել Հանձնաժողովի նախագահի թույլտվության դեպքում: Գաղտնաբառերն այլ անձանց հայտնի դառնալու դեպքում ստեղծվում են նոր գաղտնաբառեր:

2.6 Քննության պատասխանատուն (թեստ վարողը) նշանակվում է քննական հանձնաժողովի կողմից:

3. Քննական հարցաշարերում փոփոխությունների և լրացումների կատարումը և համակարգի պահուստավրումը

3.1 Քննական հարցաշարերում փոփոխությունները և լրացումները, ինչպես նաև համակարգի պահուստավորումը իրականացվում է համաձայն Հայաստանի բանկերի միության և ՀՀ Կենտրոնական բանկի միջև կնքված պայմանագրի:

4. Քննությունների արդյունքների բողոքարկումը

4.1 Թեկնածուների կողմից դիմում-բողոքների ներկայացումը և պատասխանների տրամադրումը իրականացվում է Կանոնակարգով սահմանված կարգով և ժամկետներում:

5. Պատասխանատվությունը

5.1 Սույն ընթացակարգի խախտումներ թույլ տված անձիք պատասխանատվություն են կրում ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով: